

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

Հիմնադիր խորհրդարանի

պատգամավորության թեկնածուների ընտրագատման

1. Գործունակություն:
2. Հայերենի իմացություն:
3. «Հայաստանի Հանրապետությունում (Արցախը ներառյալ) նորգաղութային իրավիճակի հաղթահարման և նոր որակի հայկական պետության ձևավորման համահայկական շարժման» ծրագրի և Նախախորհրդարանի մշակած ու ընդունած՝ «Նոր որակի հայկական պետության ձևավորման և զարգացման ռազմավարական հայեցակարգ»-ի նախագծի ընդհանուր դրույթների հետ համաձայնություն:
4. 27 տարին լրացած լինելու հանգամանք (21-27 տարեկան անձանց համար սահմանվում է մասնաբաժին՝ մինչև 5 տեղ):
5. Բարձրագույն կրթություն (բարձրագույն կրթություն չունեցող անձանց համար սահմանվում է մասնաբաժին՝ մինչև 5 տեղ):
6. ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա պետության քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայ լինելու հանգամանք (ՀՀ քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայերի համար սահմանվում է մասնաբաժին՝ մինչև 11 տեղ):
7. Հիմնադիր խորհրդարանի աշխատանքի մեկնարկի պահից ՀՀ (ներառյալ Արցախը) տարածքում մշտական բնակության և ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար սահմանված կարգով դիմում ներկայացրած լինելու հանգամանքներ:
8. Հիմնադիր խորհրդարանի Ընտրական հանձնաժողովի և Արդարության ատյանի անդամ չլինելու հանգամանք:
9. Որպես պատգամավորության թեկնածու գրանցվելու պահից պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն չգրադեցնելու հանգամանք:
10. Դիտավորությամբ հանցագործություն կատարած չլինելու հանգամանք*:
11. Նախկին ԽՍՀՄ կամ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների կամ իրավապահ մարմինների աշխատող կամ նախկին ԽՍՀՄ, ՀՀ, ԼՂՀ կամ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների կամ իրավապահ մարմինների արտահաստիքային գործակալ չլինելու հանգամանք:
12. ՀՀ-ում կամ ԼՂՀ-ում ստորև նշված կամ դրանց հավասարեցվող պաշտոններից որևէ մեկը գրադեցրած չլինելու հանգամանք՝
 - Նախագահ,
 - Ազգային ժողովի նախագահ կամ Ազգային ժողովի նախագահի տեղակալ,
 - Վարչապետ կամ փոխվարչապետ,
 - Ազգային անվտանգության խորհրդի անդամ,
 - Նախագահի կամ Կառավարության աշխատակազմի ղեկավար կամ տեղակալ,
 - մարզպետ կամ մարզպետի տեղակալ,
 - Երևանի քաղաքապետ կամ Երևանի քաղաքապետի տեղակալ, Երևանի վարչական շրջանի ղեկավար, այլ համայնքի ղեկավար*,

- *անվտանգության, ուստիկանության, ֆիսկալ, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող և քրեակատարողական մարմինների աշխատող*;*
- *դատավոր, դատախազ, քննիչ*;*
- *Կենտրոնական բանկի նախագահ, տեղակալ կամ խորհրդի անդամ,*
- *Վերահսկիչ պալատի անդամ,*
- *Նախագահի կամ Վարչապետի վերահսկողական ծառայության աշխատող,*
- *Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ,*
- *պետության ֆինանսավորմամբ կամ հովանավորությամբ գործող Օրագրի իրականացման գրասենյակի ղեկավար կամ տեղակալ*;*
- *Ընտրական հանձնաժողովի անդամ (վարչախումբը ներկայացնող կուսակցության կողմից),*
- *վարչախումբը ներկայացնող կուսակցության ղեկավար մարմնի անդամ*:*

Ծանոթագրություններ

1. 4-6-րդ կետերով նախատեսված մասնաբաժինները սահմանվում են դրանց գումարի (21) և Հիմնադիր խորհրդարանի տեղերի ընդհանուր քանակի (65) միջև 1/3 հարաբերակցությունը չգերազանցելու տրամաբանությամբ:

2. 10 և 12-րդ կետերում աստղանիշներով նշված չափանիշներին համապատասխանող անձի թեկնածությունը գրանցելու, ինչպես նաև ըստ սույն փաստաթղթով չնախատեսված չափանիշի անձի թեկնածությունը չգրանցելու հարցերի որոշման իրավասությունը վերապահվում է Հիմնադիր խորհրդարանի Ընտրական հանձնաժողովին: Ընտրական հանձնաժողովը պարտավոր է իր այդպիսի որոշումները հիմնավորել և հրապարակել: